ՔԱՂՎԱԾՔ

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 12.03.2020թ. ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ

Ք. Վանաձոր Ավագանու նստավայր

Նիստը վարում էր համայնքի ղեկավար, ավագանու անդամ Մամիկոն Ասլանյանը:

Մասնակցում էին՝

Հայաստանի Հանրապետական կուսակցության ավագանու խմբակցության անդամներ՝

Արտյոմ Գրիգորյանը,Վահագն Ավագյանը , Արմեն Մատինյանը, Սոխակ Մելքոնյանը, Գայանե Քալանթարյանը, Սեյրան Ղամբարյանը, Հայկազ Մովսիսյանը, Դավիթ Սիմոնյանը, Խորեն Վարդանյանը, Վահե Դոխոյանը, Արման Ափինյանը, Մարինե Հովհաննիսյանը:

Հայ Հեղափոխական Դաշնակցություն կուսակցության ավագանու խմբակցության անդամներ՝

ԱրևիկԼոքյանը, Սեյրան Ղամաբարյանը:

«Հայկական Վերածնունդ» կուսակցության ավագանու խմբակցության անդամներ՝

Արկադի Փելեշյանը, Արեն Խաչատրյանը, Կարեն Դավթյանը, Հասմիկ Խլոպուզյանը:

«Լուսավոր Հայաստան» կուսակցության ավագանու խմբակցության անդամներ՝

Քրիստ Մարուքյանը, Արմեն Ավետյանը,Վահե Կոռյանը, Հայկազ Սիմիկյանը, Անահիտ Կարապետյանը, Արման Սիրադեղյանը, Կարեն Բեկչյանը:

«Բարգավաճ Հայաստան» կուսակցության ավագանու անդամներ՝

Մարիամ Ապերյանը, Դավիթ Հակոբյանը, Հրաչիկ Ղամբարյանը:

Նիստից բացակայում էին՝

«Հայկական Վերածնունդ» կուսակցության ավագանու անդամներ՝

Տիգրան Նազարյանը, Հասմիկ Խլոպուզյանը:

«Լուսավոր Հայաստան» կուսակցության ավագանու խմբակցության անդամներ՝

ՌոմիկՄարգարյանը Սուրեն Կարապետյանը, Կարինե Ղուկասյանը:

Նիստին մասնակցում էին նաև համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Արթուր Օհանյանը, մարզպետարանի, համայնքապետարանի պատասխանատու պաշտոնյաներ, ստորաբաժանումների ղեկավարներ, ինչպես նաև հասարակական կազմակերպությունների և ԶԼՄ-ների ներկայացուցիչներ ու քաղաքացիներ:

Նիստը վարող Մամիկոն Ասլանյանը ժամը 10.15-ին նիստը հայտարարեց բացված:

(Վանաձորի ավագանու 2020 թվականի 12.03.2020 ավագանու հերթական նիստի տեսաձայնագրությունն ամբողջովին առկա է համայնքապետարանի պաշտոնական կայքում):

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել ներկայացված օրակարգը:

Կողմ՝ 19, դեմ՝ 9, Ք. Մարուքյան, Հ. Սիմիկյան, Ա. Կարապետյան, Ա. Ավետյան, Վ. Կռոյան, Ա. Սիրադեղյան, Մ. Ապերյան, Հ. Ղամբարյան, Դ. Հակոբյան, ընդունվեց որոշում:

Հաստատվեց օրակարգը՝

1. ՀՀ Լոռու մարզի Վանաձոր համայնքի 2019 թվականի բյուջեի կատարման տարեկան և հաշվետու տարում 2018-2021 թվականների զարգացման ծրագրի իրականացման վերաբերյալ 2019 թվականի հաշվետվությունները հաստատելու մասին

զեկ.Մ.Ասլանյան, Վ.Գրիգորյան, Լ.Դավթյան

2. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնքի 2019 թվականի տարեկան աշխատանքային պլանի իրականացման տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին

զեկ. Լ.Դավթյան

3. Հայաստանի Հանրապետության համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիա ստանալու և Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնքի «Աթլետիկայի օլիմպիական մասնագիտացված մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ-ի շենքի հիմնանորոգում, «Հրաչյա Կլեկչյանի անվան թիվ 1 մշակույթի տուն» ՀՈԱԿ-ի շենքի հիմնանորոգում և «Հրանտ Մաթևոսյանի անվան գրադարանայի համակարգ» ՀՈԱԿ-ի Թատերական 2 հասցեում գտնվող շենքի հիմնանորոգում սուբվենցիայի հայտին համաձայնություն տալու մասին

զեկ. Լ.Դավթյան

4. Հայաստանի Հանրապետության համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիա ստանալու և Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի «Վանաձոր համայնքի բազմաբնակարան շենքերի ընդհանուր բաժնային սեփականության գույքի նորոգում՝ էներգախնայող միջոցառումների կիրառմամբ» սուբվենցիայի հայտին համաձայնություն տալու մասին

զեկ.Լ.Դավթյան

5. Հայաստանի Հանրապետության համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիա ստանալու և Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնքի Շառլ Ազնավուրի անվան այգու հիմնանորոգում, Տարոն-2 և Տարոն-4 այգիների կառուցում սուբվենցիայի հայտին համաձայնություն տալու մասին

զեկ.Լ.Դավթյան

6. Հայաստանի Հանրապետության համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիա ստանալու և Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի

Վանաձոր համայնքի Չուխաջյան, Լալվարի փողոցների և կենտրոնական մայթերի կապիտալ նորոգում սուբվենցիայի հայտին համաձայնություն տալու մասին

զեկ.Լ.Դավթյան

7. Վանաձոր համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 23–ի թիվ 167-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին

զեկ. Վ.Գրիգորյան

8. Վանաձոր համայնքի ավագանու 2019 թվականի նոյեմբերի 28-ի թիվ 153-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին

զեկ. Գ. Բաղյան, Գ. Մացակյան

9. Վանաձոր համայնքի ավագանու 2019 թվականի նոյեմբերի 28 –ի թիվ 146 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին

զեկ. Գ.Բաղյան

10. Վանաձոր համայնքի ավագանու 2019 թվականի նոյեմբերի 28-ի թիվ 146 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին

զեկ. Գ.Բաղյան

11. «Վանաձոր համայնքի թիվ 28 մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության սենյակը վարձակալությամբ տրամադրելուն համաձայնություն տալու մասին

զեկ.Կ.Սարոյան

12. Վանաձոր համայնքի սեփականություն հանդիսացող մամլիչ սարքը վարձակալությամբ տրամադրելուն համաձայնություն տալու մասին

զեկ. Կ.Սարոյան

13. «Վանաձորի քաղաքային տնտեսություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը անհատույց օգտագործման իրավունքով գույք հանձնելու և Վանաձոր համայնքի ավագանու 19 մարտի 2019 թվականի թիվ 25 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին

զեկ. Կ. Սարոյան

14. Վանաձոր համայնքի ավագանու 2019 թվականի նոյեմբերի 28-ի թիվ 148 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին

զեկ. Կ. Պառավյան

15. Վանաձոր համայնքի վարչական տարածքում գտնվող համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերի աճուրդային վաճառքի նվազագույն մեկնարկային գները սահմանելու մասին

զեկ. Ս.Աբովյան

16. Վանաձոր համայնքի սեփականություն հանդիսացող հողամասը մրցույթով կառուցապատման իրավունքով տրամադրելու և հողամասի վարձավճարի մեկնարկային գինը սահմանելու մասին

զեկ. Ս.Աբովյան

17. Վանաձոր համայնքի վարչական սահմաններում գտնվող հողամասը համայնքային սեփականություն ճանաչելու մասին

զեկ. Ս.Աբովյան

18. Վանաձոր քաղաքի Նարեկացու փողոց թիվ 30/1-1 հասցեում գտնվող, Վանաձոր համայնքի սեփականություն հանդիսացող հողամասը «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությանը օտարելու մասին

զեկ. Ս.Աբովյան

19. Վանաձոր քաղաքի Նարեկացու փողոց 3-րդ փակուղի թիվ 5/5 հասցեում գտնվող հողամասը Արփիկ Հակոբի Սաֆարյանին սեփականության իրավունքով անհատույց տրամադրելու (օտարելու) մասին

զեկ. Ս.Աբովյան

20. Ատոմ Միքայելի Մալումյանին սեփականության իրավունքով պատկանող Վանաձոր քաղաքի ուսանողական փողոց թիվ 1/5-1 հասցեում գտնվող հողամասը Վանաձոր քաղաքի Ուսանողական փողոց թիվ 1/7-1 հասցեում գտնվող հողամասի հետ փոխանակությանը համաձայնություն տալու մասին

զեկ. Ս.Աբովյան

21. Վանաձոր համայնքի ավագանու հերթական նիստի օրը որոշելու մասին

զեկ. Մ.Ասլանյան

ԸՆԹԱՑՔԸ՝

1.**ԼՍԵՑԻՆ** - ՀՀ Լոռու մարզի Վանաձոր համայնքի 2019 թվականի բյուջեի կատարման տարեկան և հաշվետու տարում 2018-2021 թվականների զարգացման ծրագրի իրականացման վերաբերյալ 2019 թվականի հաշվետվությունները հաստատելու մասին:

Նիստը վարող Մամիկոն Ասլայանը ամփոփ ներկայացրեց Վանաձոր համայնքի 2019 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվության հիմնական ցուցանիշներն: Այնուհետ հաշվետվությունը ներկայացվեց գրաֆիկական տեսանյութով: հաշվետու տարում 2018-2021 թվականների զարգացման ծրագրի իրականացման ուղղությամբ կատարված աշխատանքները:

Հաջորդիվ հաշվետու տարում 2018-2021 թվականների զարգացման ծրագրի իրականացման վերաբերյալ 2019 թվականի հաշվետվությունը ներկայացրեց զարգացման ծրագրերի, արտաքին կապերի և տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի պետ Լիլյա Դավթյանը:

Լիլյա Դավթյանը տեղեկացրեց նաև, որ որ Վանաձորի համայնքապետարանը պատրաստվում է հայտ ներկայացել ԵՄ-ի կողմից նախաձեռնվող «Տեղական իշխանություններ. գործընկերություն կայուն քաղաքների համար» ծրագրին, որի հիմնական նպատակն է աջակցել ինտեգրված քաղաքային զարգացմանը՝ ԵՄ անդամ երկրների և գործընկեր երկրների տեղական ինքնակառավարման մարմինների միջև: Ծրագրին ուղղված է քաղաքային կառավարման ուժեղացմանը, միևնույն ժամանակ թիրախավորելով քաղաքների սոցիալական ներառականության և կայունության (դիմակայության), ինչպես նաև բարեկեցության և նորարականության ապահովումը:

Ավագանին հաղորդումն ընդունեց ի գիտություն:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 19, դեմ՝ 6 /Ք. Մարուքյան, Հ. Սիմիկյան, Ա. Կարապետյան, Ա. Ավետյան, Վ. Կռոյան, Ա. Սիրադեղյան/, ընդունվեց որոշում:

2. ԼՍԵՑԻՆ-Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնքի 2019 թվականի տարեկան աշխատանքային պլանի իրականացման տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին:

- զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի, արտաքին կապերի և տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի պետ Լիլյա Դավթյանը:

Զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 14, դեմ՝ 6 /Ք. Մարուքյան, Հ. Սիմիկյան, Ա. Կարապետյան, Ա. Ավետյան, Վ. Կռոյան, Ա. Սիրադեղյան/, ընդունվեց որոշում:

3. ԼՍԵՑԻՆ- Հայաստանի Հանրապետության համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիա ստանալու և Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնքի «Աթլետիկայի օլիմպիական մասնագիտացված մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ-ի շենքի հիմնանորոգում, «Հրաչյա Կլեկչյանի անվան թիվ 1 մշակույթի տուն» ՀՈԱԿ-ի շենքի հիմնանորոգում և «Հրանտ Մաթևոսյանի անվան գրադարանայի համակարգ» ՀՈԱԿ-ի Թատերական 2 հասցեում գտնվող շենքի հիմնանորոգում սուբվենցիայի հայտին համաձայնություն տալու մասին:

- զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի, արտաքին կապերի և տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի պետ Լիլյա Դավթյանը:

Զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 26, ընդունվեց որոշում:

4. ԼՍԵՑԻՆ - Հայաստանի Հանրապետության համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիա ստանալու և Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի «Վանաձոր համայնքի բազմաբնակարան շենքերի ընդհանուր բաժնային սեփականության գույքի նորոգում՝ էներգախնայող միջոցառումների կիրառմամբ» սուբվենցիայի հայտին համաձայնություն տալու մասին:

- զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի, արտաքին կապերի և տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի պետ Լիլյա Դավթյանը:

Զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 26, ընդունվեց որոշում:

5. ԼՍԵՑԻՆ- Հայաստանի Հանրապետության համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիա ստանալու և Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնքի Շառլ Ազնավուրի անվան այգու հիմնանորոգում, Տարոն-2 և Տարոն-4 այգիների կառուցում սուբվենցիայի հայտին համաձայնություն տալու մասին:

- զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի, արտաքին կապերի և տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի պետ Լիլյա Դավթյանը:

Զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 26, ընդունվեց որոշում:

6. ԼՍԵՑԻՆ -Հայաստանի Հանրապետության համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիա ստանալու և Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնքի Չուխաջյան, Լալվարի փողոցների և կենտրոնական մայթերի կապիտալ նորոգում սուբվենցիայի հայտին համաձայնություն տալու մասին:

- զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի, արտաքին կապերի և տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի պետ Լիլյա Դավթյանը:

Զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 27, ընդունվեց որոշում:

7. ԼՍԵՑԻՆ- Վանաձոր համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 23–ի թիվ 167-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին :

- զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսական բաժնի պետ Վահե Գրիգորյանը:

Զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 24 , ընդունվեց որոշում:

8. ԼՍԵՑԻՆ - Վանաձոր համայնքի ավագանու 2019 թվականի նոյեմբերի 28-ի թիվ 153-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին::

- զեկուցեցին համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսական բաժնի պետ Վահե Գրիգորյանը և ֆիզկուլտուրայի, սպորտի և երիտասարդության հարցերի բաժնի պետ Գևորգ Մացակյանը:

Զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Քվեարկությամբ, կողմ՝ 21 , ընդունվեց որոշում:

9. **ԼՍԵՑԻՆ-** Վանաձոր համայնքի ավագանու 2019 թվականի նոյեմբերի 28 –ի թիվ 146 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին

- զեկուցեց աշխատակազմի մշակույթի, կրթության և զբոսաշրջության հարցերի բաժնի պետ Գոռ Բաղյանը:

Զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը

Քվեարկությամբ, կողմ՝ 24, ընդունվեց որոշում:

10. **ԼՍԵՑԻՆ**- Վանաձոր համայնքի ավագանու 2019 թվականի նոյեմբերի 28-ի թիվ 146 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

- զեկուցեց աշխատակազմի մշակույթի, կրթության և զբոսաշրջության հարցերի բաժնի պետ Գոռ Բաղյանը:

Զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 24, ընդունվեց որոշում:

11.ԼՍԵՑԻՆ-«Վանաձոր համայնքի թիվ 28 մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության սենյակը վարձակալությամբ տրամադրելուն համաձայնություն տալու մասին:

- զեկուցեց աշխատակազմի մշակույթի, կրթության և զբոսաշրջության հարցերի բաժնի պետ Գոռ Բաղյանը:

Զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, դեմ՝ 13 /Մ. Ապերյան, Վ. Դոխոյան, Ա. Մատինյան, Ս. Մելքոնյան, Խ. Վարդանյան, Ա. Գրիգորյան, Դ. Սիմոնյան, Ս. Ղամբարյան, Հ. Սիմիկյան, Ք. Մարուքյան, Ա. Կարապետյան, Ա. Ավետյան, Կ. Դավթյան/, ձեռնպահ՝ 4 /Գ. Քալանթարյան, Դ. Հակոբյան, Ա. Ափինյան, Կ. Բեկչյան/, որոշում չընդունվեց:

12. ԼՍԵՑԻՆ- Վանաձոր համայնքի սեփականություն հանդիսացող մամլիչ սարքը վարձակալությամբ տրամադրելուն համաձայնություն տալու մասին:

- զեկուցեց աշխատակազմի աշխատակազմի քարտուղար Արթուր Օհանյանը:

Զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 19 , ընդունվեց որոշում:

13. ԼՍԵՑԻՆ - «Վանաձորի քաղաքային տնտեսություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը անհատույց օգտագործման իրավունքով գույք հանձնելու և Վանաձոր համայնքի ավագանու 19 մարտի 2019 թվականի թիվ 25 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին:

- զեկուցեց աշխատակազմի կոմունալ տնտեսության, բարեկարգման և շրջակա միջավայրի պահպանության բաժնի պետ Կարեն Պառավյանը:

Զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ , կողմ՝ 20, ընդունվեց որոշում:

14. ԼՍԵՑԻՆ - Վանաձոր համայնքի ավագանու 2019 թվականի նոյեմբերի 28-ի թիվ 148 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

- զեկուցեց աշխատակազմի կոմունալ տնտեսության, բարեկարգման և շրջակա միջավայրի պահպանության բաժնի պետ Կարեն Պառավյանը:

Զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ , կողմ՝ 19, ընդունվեց որոշում:

15. ԼՍԵՑԻՆ - Վանաձոր համայնքի վարչական տարածքում գտնվող համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերի աճուրդային վաճառքի նվազագույն մեկնարկային գները սահմանելու

մասին:

Հարցի քննարկմանը ներկա էին ավագանու 17 անդամ:

- զեկուցեց աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի պետ Սուրեն Աբովյանը:

Զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 10, դեմ՝ 4/Դ. Հակոբյան, Ք. Մարուքյան, Հ. Սիմիկյան, Ա. Կարապետյան,/, ձեռնպահ՝ 1 /Ա. Ավետյան/, ընդունվեց որոշում:

Քվորումի բացակայության պատճառով նիստն ընդհատվեց և հաստատված օրակարգի թիվ 17,18, 19, 20, 21 և 22 հարցերը չքննարկվեցին և որոշումներ չկայացվեցին:

ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵՑ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ ԱՐԹՈՒՐ ՕՀԱՆՅԱՆԸ

Արձանագրությունը կազմեց Է. Հովսեփյանը